ՈՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԵՂԵՑԿԱՅՈՒՄ
Է
ՍԱՐԴՈՒ ՀՈԳԻՆ

E-GIRQ.COM

# Անագե տուկուն զինվորիկը

Կային, չկային՝ քսանհինգ հատ անագե զինվորիկ կային: Նրանք բոլորն էլ ծնվել էին մեկ մորից՝ մի հին անագե գդալից, ուրեմն՝ հարազատ եղբայրներ էին: Շատ գեղեցիկ էին այդ զինվորիկները, կարմիր ու կապույտ համազգեստներով, ամեն մեկի ուսին՝ մի հրացան, հայացքները հառած ուղիղ դեպի առաջ:

«Անագե զինվորիկնե՞ր»,– ահա առաջին խոսքը, որ լսեցին եղբայրները, երբ բացվեց այն տուփը, որի մեջ պահված էին իրենք: Ծափ զարկելով՝ այդպես գոչեց մի փոքրիկ տղա: Այդ օրը նրա ծննդյան օրն էր, զինվորիկները նվեր էին բերել: Տղան իսկույն սկսեց սեղանի վրա շարել նրանց: Զինվորիկներից ամեն մեկը ջրի երկու կաթիլի պես նման էր մյուսին, սակայն մեկը տարբերվում էր իր եղբայրներից. նա ուներ միայն մեկ ոտք: Ամենավերջում նրան էին ձուլել, և երկրորդ ոտքի համար անագը չէր բավականացրել: Բայց նա էլ իր մեկ ոտքի վրա այնպես ամուր էր կանգնած, ինչպես մյուսները՝ երկու ոտքի վրա, և հենց նա՛ էր, որ աչքի ընկավ կյանքում:

Տղան իր զինվորիկներին շարեց սեղանի վրա: Այստեղ ուրիշ շատ խաղալիքներ էլ կային, բայց ամենից գեղեցիկը մի հրաշալի, ստվարաթղթից պատրաստված դղյակ էր: Նրա փոքրիկ լուսամուտներից կարելի էր տեսնել ներսը: Դղյակի առաջ կար մի փոքրիկ հայելի, որը շատ նման էր իսկական լճի, իսկ շուրջը շարված էին մանրիկ ծառեր: Լճի մեջ մոմից շինված կարապներ էին լողում և, իրենց արտացոլանքին նայելով՝ հիանում: Այդ ամենը այնքա՜ն լավ էր, բայց ամենից լավն այն աղջիկն էր, որ կանգնած էր դղյակի բաց դռան շեմին: Նա էլ էր ստվարաթղթից կտրած: Նրա հագին ամենանուրբ բատիստից կարված շրջազգեստ կար, իսկ մի նեղլիկ ժապավեն շեղակի ցած էր իջնում ուսից մինչև գոտին: Ժապավենն ամրացված էր շողշողուն վարդակապով, որ աղջկա երեսի մեծությունն ուներ: Այդ գեղեցկուհին պարուհի էր. նա երկու ձեռքերը պարզել էր առաջ և մի ոտքն

այնպես էր վեր բարձրացրել, որ անագե զինվորիկն սկզբում բոլորովին չտեսավ այդ ոտքը, և կարծում էր, թե աղջիկն էլ իր նման միոտանի է:

«Ա՜յ թե այսպիսի կին ունենայի,– մտածեց անագե զինվորիկը,– միայն թե՝ սա, երևի, նշանավոր տոհմից է. դղյակում է ապրում, իսկ ես՝ տուփի մեջ և, բացի այդ՝ քսանհինգ հատ ենք մի տուփի մեջ: Չէ՛, տուփը նրա տեղը չի: Բայց և այնպես, չէր խանգարի ծանոթանալ հետը»:– Եվ նա ամբողջ երկարությամբ ձգվեց ծխախոտի տուփի հետևում, որ նույնպես դրված էր սեղանին: Այստեղից նա կարող էր անթարթ նայել գեղեցիկ պարուհուն, որն էլի կանգնած էր մեկ ոտքի վրա, առանց հավասարակշռությունը կորցնելու:

Ուշ երեկոյան մյուս բոլոր զինվորիկներին նորից դարսեցին տուփի մեջ, և տանը եղած մարդիկ պառկեցին քնելու: Այն ժամանակ խաղալիքներն իրենք սկսեցին խաղալ. նրանք իրար հյուր էին գնում, պատերազմ էին մղում, պարահանդես էին սարքում: Անագե զինվորիկները տուփի մեջ սկսեցին խլրտալ. նրանք էլ էին ուզում խաղին մասնակցել, բայց տուփի խուփը բարձրացնել չէին կարողանում: Ընկուզկոտրիչը գլուխկոնծի էր տալիս, իսկ քարեգրիչը վազվզել սկսեց քարե տախտակի վրա: Այնպիսի ժխոր բարձրացավ, որ դեղձանիկն արթնացավ ու սկսեց բլբլալ, այն էլ՝ հանգերով: Միայն անագե զինվորիկը և պարուհին էին, որ տեղից չէին շարժվում: Աղջիկը ուղիղ կանգնել էր մի ոտքի ձիգ ծայրի վրա և երկու ձեռքերը պարզել առաջ: Զինվորիկը նույնպես ամուր կանգնել էր իր միակ ոտքի վրա և ոչ մի րոպե աչքը չէր հեռացնում պարուհուց:

Ժամը տասներկուսը խփեց: Եվ հանկարծ՝ չը՛խկ-չը՛խկ: Դա ծխատուփն էր, որ չրթոցով բացվեց, բայց մեջը ծխախոտի փոխարեն նստած էր մի սև դևիկ: Դա մի շատ հմուտ ձեռքի աշխատանք էր:

– Է՛յ, անագե՛ զինվորիկ,– ասաց դևիկը,– բավական է այդպես չռես աչքերդ:

Բայց անագե զինվորիկը ձևացրեց, թե նրան չի լսում:

– Դե՛ լավ, կլուսանա՝ կտեսնես,– ասաց դևիկը:

Առավոտյան երեխաները վեր կացան, և նրանցից մեկը անագե զինվորիկին դրեց լուսամուտին: Եվ ահա, արդյոք դևի՞կն էր պատճառը, թե՞ միջանցիկ քամին՝ հանկարծ լուսամուտը բացվեց, ու զինվորիկը գլխիվայր ցած ընկավ երրորդ հարկից: Սոսկալի բան էր: Նա ընկավ գլխիվայր, և նրա սաղավարտն ու սվինը խրվեցին քարերի արանքը, և այդպես էլ մնաց՝ ոտքը դեպի վեր տնկած, գլխիվայր կանգնած:

Տան սպասուհին և փոքրիկ տղան իսկույն փողոց վազեցին՝ զինվորիկին գտնելու: Որոնեցին, որոնեցին, մի քանի անգամ քիչ էր մնում ոտքը վրան դնեին, բայց և այնպես չգտան:

Եթե զինվորիկը կանչեր՝ «Այստե՞ղ եմ», նրանք, իհարկե, կգտնեին, բայց նա անվայելուչ համարեց փողոցում գոռալ, մանավանդ որ՝ հագին զինվորական համազգեստ էր:

Բայց ահա, անձրև սկսվեց, որ ավելի ու ավելի հորդանալով՝ այնպես էր թափվում, ինչպես դույլից ջուր թափես: Երբ անձրևը դադարեց, փողոց դուրս եկան երկու տղա:

– Նայի՞ր,– ասաց նրանցից մեկը,– տե՛ս, այստեղ մի անագե զինվորիկ կա ընկած: Արի՛ սրան նավակ նստեցնենք:

Նրանք լրագրի թղթից մի նավակ պատրաստեցին, անագե զինվորիկին դրին նավակի մեջ, գցեցին ջրառատ առվակը, ապա իրենք էլ սկսեցին վազել ափով ու ծափ զարկել:

Տե՞ր Աստված, ինչպե՞ս էին ալիքները զարկվում առվի ափերին, ի՞նչ ուժեղ էր ջրի հոսանքը: Եվ զարմանալի էլ չի. չէ՞ որ հորդ անձրև էր եկել: Նավը մերթ սուզվում, մերթ բարձրանում էր ալիքների կատարը, երբեմն պտույտներ էր անում, և անագե զինվորիկը ցնցվում էր. բայց նա տոկուն զինվոր էր և շարունակում էր անխռով առաջ նայել՝ հրացանն ուսին բռնած:

Ահա նավակն սկսեց լողալ տախտակե կամրջակի տակով: Այդտեղ այնպես մութ էր, որ զինվորիկին թվաց, թե նորից ընկել է իր տուփի մեջ:

«Այս ո՞ւր եմ ընկել ես,– մտածում էր անագե զինվորիկը:– Այս բոլորը անպիտան դևիկի սարքած բաներն են: Ա՛յ, եթե այս նավակում ինձ հետ նստած լիներ փոքրիկ պարուհին՝ այն ժամանակ թող թեկուզ երկու անգամ ավելի մութ լիներ»:

Այդ րոպեին կամրջակի տակից դուրս պրծավ մի ահագին ջրմուկ. նա այստեղ էլ ապրում էր:

– է՞յ, անցագիր ունե՞ս,– գոչեց նա,– ցո՛ւյց տուր անցագիրդ:

Բայց անագե զինվորիկը լուռ էր ու ավելի ամուր էր սեղմել հրացանը: Նավակն առաջ էր լողում, իսկ մուկը՝ նրա հետևից: Օ՜, ինչպե՞ս էր նա ատամները կրճտացնում և հանդիպող տաշեղներին ու շյուղերին ձեն տալիս.

– Բռնեցե՞ք դրան, բռնեցե՞ք: Նա մաքս չի վճարել, անցագիր ցույց չի տվել:

Իսկ հոսանքն ավելի ու ավելի ուժեղանում էր: Անագե զինվորիկն արդեն նշմարում էր դրսի լույսը: Բայց դրա հետ մեկտեղ այնտեղից աղմուկ էր լսվում, այնպիսի՞ զարհուրելի աղմուկ, որ, ինչ տեսակ քաջ մարդ էլ լիներ՝ կվախենար: Ինքնե՛րդ մտածեք. այնտեղ, որտեղ տախտակները վերջանում էին, առվակը ցած էր թափվում մի մեծ ջրանցքի մեջ: Անագե զինվորիկը այնպիսի վտանգի առաջ էր, ինչպես մենք՝ եթե նավակը տանելու լիներ մեզ դեպի մի անդնդախոր ջրվեժ:

Բայց ահա, նավակը դուրս եկավ տախտակների տակից, և այլևս ոչ մի բան նրան կանգնեցնել չէր կարող: Խեղճ զինվորիկը կանգնած էր էլի այնպես ձիգ և ուղիղ, նույնիսկ աչքը չէր թարթում: Եվ հանկարծ նավակը պտույտ եկավ, հետո թեքվեց, ջրով լցվեց և սկսեց սուզվել: Ջուրը հասավ անագե զինվորիկի պարանոցին, և նավակը ջրի տակ անցավ: Այժմ ջուրը ծածկել էր զինվորիկին մինչև գլուխը: Նա մտածեց փոքրիկ, չքնաղ պարուհու մասին, որին այլևս տեսնելու բախտ չէր ունենալու: Եվ նրա ականջներում հնչեց.

*Հառա՞ջ, զինվո՛ր քաջ,*
*Մահվանն ընդառա՛ջ...*

Թուղթը բոլորովին թրջվել էր, պատռվել և, հենց այն է՝ զինվորիկը պետք է հատակն իջներ, բայց նույն րոպեին նրան կուլ տվեց մի մեծ ձուկ:

Օ՜, ի՞նչ մութ էր ձկան փորում: Այստեղ ավելի վատ էր, քան տախտակների տակ, և շատ ավելի նեղվածք: Բայց անագե զինվորիկն այստեղ էլ տոկուն էր. հրացանն ուսին բռնած՝ նա պառկել էր, ամբողջ հասակով ձգվել:

Իսկ նրան կուլ տված ձուկը դեսուդեն էր ընկնում և ամենազարմանալի շարժումներ կատարում. բայց հետո բոլորովին հանդարտվեց: Անցավ մի որոշ ժամանակ, և հանկարծ խավարի մեջ կայծակի պես փայլատակեց մի շողշողուն բան, հետո բոլորովին լուսացավ, և մեկը բարձր գոչեց. «Անագե զինվորի՜կը»:

Ձուկը բռնել էին, տարել շուկա, այնտեղից գնել ու բերել խոհանոց, որտեղ խոհարարուհին կտրել էր նրա փորը սուր դանակով: Կինը երկու մատով բռնեց զինվորիկի մեջքից ու տարավ սենյակ, ուր բոլոր տնեցիները հավաքվեցին նայելու այդ զարմանալի մարդուկին, որը ճամփորդել էր ձկան փորում: Բայց անագե զինվորիկը չէր գոռոզանում:

Նրան դրին սեղանի վրա, և ահա՛, ինչե՜ր ասես չի պատահում աշխարհում. պարզվեց, որ զինվորիկը նույն սենյակումն է, որտեղ եղել էր առաջ, և տեսավ միևնույն երեխաներին: Նույն խաղալիքներն առաջվա պես կանգնած էին սեղանին, իսկ դրանց մեջ՝ հրաշալի դղյակն իր փոքրիկ, չքնաղ պարուհիով: Վերջինս էլի նույն ձևով կանգնած էր մեկ ոտքի վրա, մյուսը՝ վեր բարձրացրած. նա ևս տոկուն ու կայուն էր: Այս ամենից անագե զինվորիկն այնպես զգացվեց, որ քիչ մնաց լաց լինի անագե արցունքներով: Բայց զինվորին վայել չէ լաց լինել, և նա միայն նայեց աղջկան, աղջիկը՝ նրան: Եվ ոչ մեկը ոչինչ չասաց:

Հանկարծ տղաներից մեկը ճանկեց զինվորիկին և, չգիտես ինչու, նետեց վառարանի մեջ: Երևի, ծխատուփի մեջ նստած դևիկն էր նրան այդպես սովորեցրել:

Այժմ զինվորիկը կանգնած էր վառարանի մեջ՝ պայծառ բոցերով բռնված: Սարսափելի շոգ էր, նա զգում էր, որ ամբողջովին վառվում է, բայց ինչի՞ց էր վառվում՝ կրակի՞ց, թե՞ սիրուց, ինքն էլ չգիտեր: Նրա վրայի ներկերը բոլորովին խունացել էին. վշտի՞ց էր դա, թե՞ ճամփորդության ժամանակ էր այդպես եղել, այդ ևս ոչ ոք չգիտեր: Զինվորիկը նայում էր աղջկան, աղջիկը՝ նրան, և նա զգում էր, որ հալվում է, բայց դեռ կանգնած էր ուղիղ, հրացանն ուսին սեղմած: Հանկարծ սենյակի դուռը չրխկոցով բացվեց, քամին պարուհուն պոկեց իր տեղից, և նա, պարիկի պես ճախրելով, ընկավ վառարանի մեջ՝ ուղիղ անագե զինվորիկի մոտ, անմիջապես բռնկվեց պայծառ բոցով և... այլևս չկար պարուհին: Իսկ անագե զինվորիկը հալվելով մի գնդիկ դարձավ:

Հետևյալ օրը, երբ սպասուհին վառարանի մոխիրը քաշեց՝ այնտեղ գտավ մի անագե սրտիկ: Իսկ պարուհուց մնացել էր միայն մետաղե վարդակապը, որն այլևս չէր փայլում. սև էր՝ ածուխի պես: